Գործ թիվ. ԵԴ/35333/02/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

քաղաքացիական գործը վարույթ ընդունելու և
դատական նիստ հրավիրելու մասին

12.10.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Պետրոսյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ/35333/02/22 քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «ՄՆԱՐ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնման պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ /անվավեր/ ճանաչելու և գումարի բռնագանձման պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր «ՄՆԱՐ» ՍՊ ընկերության տնօրեն Ն. Սարգսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնման պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ /անվավեր/ ճանաչելու և գումարի բռնագանձման պահանջների մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր Ռ. Ներսիսյան/ 26.07.2022թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Նույն օրվա Դատարանի մեկ այլ որոշմամբ հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, մերժվել է:

16.09.2022թ. որոշմամբ նշանակվել է նախնական դատական նիստ:

03.08.2023թ. դատական նիստում Դատարանը կայացրել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու հիմքով թիվ ԵԴ/35333/02/22 քաղաքացիական գործը 05.10.2023 թվականին վերաբաշխվել է դատավոր Ա.Պետրոսյանին, որը դատավորի աշխատակազմին է հանձնվել 09.10.2023թ-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 27-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.9-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԴ/35333/02/22 քաղաքացիական գործն՝ ըստ հայցի «ՄՆԱՐ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնման պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ /անվավեր/ ճանաչելու և գումարի բռնագանձման պահանջների մասին, ընդունել վարույթ:

Սույն քաղաքացիական գործով դատական նիստ հրավիրել **2023թ. նոյեմբերի 23-ին, ժամը 11:15-ին** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2 նստավայրի վարչական շենքում՝ ք.Երևան, Հալաբյան 41^{Ա} հասցեում (11-րդ հարկ, թիվ 6 նիստերի դահլիճ):

Որոշման օրինակներն ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ԱՐԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ